

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918–1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հրապարակվող արխիվային փաստաթղթերը հավաստում են Հայաստանի Առաջին Հանրապետության և Իտալիայի թագավորական կառավարության միջև հաստատված կապերի և հարաբերությունների զարգացման մասին: Դրանք շարունակվեցին և Խորհրդային Հայաստանի Հանրապետության առաջին տարում: Կասկած չկա, որ լինելով քաղաքական, ռազմական, առևտրատնտեսական, եկեղեցական և այլ բնագավառներում: Հաստատվել էին հարաբերություններ Վատիկանի և Ա. Էջմիածնի, Հոմի պապի և Հայաստանի կառավարության միջև: Հայաստան էր եկել և կառավարության ղեկավարներին ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանգիպել Անդրկովկասում պապի հանձնակատար հայր Դեյֆուշը: Նա ծանոթացել էր և գաղթականության ծանր վիճակին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասին հայտարարություններով հանդես էին եկել Իտալիայի վարչապետներ Լուիջի Լուցետին, Վիտտորիո Էմանուել Օուլանդոն, Ֆրանչեսկո Սեվերի Նիտտին: Վերջինս նախագահում էր Սան-Ռեմոյի խորհրդաժողովում, որտեղ քննարկվում էին նաև Հայկական հարցին ու Հայաստանին վերաբերող խնդիրներ: 1918թ. նոյեմբերի 26-ին Իտալիայի խորհրդարանը միաձայն՝ 195 ձայնով բանաձև ընդունեց՝ դրսևորելով «դարավոր բռնակալից Հայաստանի քաղաքական անկախությունը պաշտպանելու» իր կամքը:

Հայ-իտալական հարաբերություններն ավելի ընդարձակվեցին Հայաստանի Հանրապետությունը դե ֆակտո ճանաչելուց հետո: Միջայել Վարանդյանը հաստատվել էր Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Իտալիայում, Հայաստան էր ժամանել մեծախումբ առաքելություն՝ սենատոր Է. Կունտիի գլխավորությամբ, զինվորական առաքելության փոխարեն Իտալիան Հայաստանում հաստատել էր քաղաքական գործակալություն՝ գնդապետ Գաբբայի գլխավորությամբ: 1920թ. նոյեմբերին Հայաստանում Իտալիայի դեսպանորդ-նախարար Նշանակվեց Ջիաքոմո Գորրինին: Իտալական քաղաքական գործակալությունը աշխատանք ծավալեց Հայաստանի հետ տնտեսական, առևտրական, արդյունաբերական կապերի ստեղծման ուղղությամբ, բացվեց «Սագո» իտալական ֆիրմայի բաժանմունք, Երևանում իտալական հեռախոսակայան հիմնվեց: Իտալիային հատկապես հետաքրքրում էր պղնձի, բրդի, կաշվի և բրնձի ձեռքբերման հարցը, Սարիղամիշ–Էրզրում երկաթգծում փոխադրամիջոցների վիճակը, վագոնների և պլատֆորմների առկայությունը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո էլ Իտալիայում շարունակում էր գործել Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպանությունը: Նշանակալի էր Վարանդյանի հանդիպումը և զրույցը Իտալիայի վարչապետ Մուսոլինիի հետ:

№ 1,2,3,6,7,8,9,12 փաստաթղթերը ֆրանսերենից թարգմանել է Մարինա Դերդերյանը:

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

№ 1

Կարդինալ Գասպարրին՝ Ավստրո-Հունգարիայի մինիստրների ընդհանուր
խորհրդի նախագահին

1 հուլիսի 1918 թ.

Վատիկան

Ձերդ Գերազանցություն

Հռոմի պապի Հայրական սիրալ խոր զգացումներ ու մեծ ցավ ապրեց կարգալուծ այն զեկուցագիրը, որը նրան էր ընձեռված արժանահավատ աղբյուրի կողմից և որը ցույց էր տալիս Արևելքի քրիստոնյաների ահավոր վիճակը: Ականատեսների կողմից թվարկված անլսելի տառապանքները, մահապատիժները, կոտորածները, որոնց ենթարկվել է խեղճ քրիստոնյա ընակչությունը, Հատկապես Հայերը, նրանց դուռերի սխտեմատիկ ավերումների տպավորիչ նկարագրությունը, սովր, որն ամեն օր Հարյուրավոր զոհեր է պատճառում, այդքան դժբախտ անմեղների տանջանքները, որոնք անօրեն ու սանձարձակ ղինվորների խաղալիք են դարձել, և, Հատկապես, այն Հայտարարությունը, որ երեխաները ուժի զորությունը մահմեդականացվում են, որ կանանց ըռնի ուժով ստիպում են ուրանալ քրիստոնեական Հավաար, այլապես նրանց սպառնում են սարսափելի մարտիրոսություններ: այս ամենը խորապես, մինչև հոգու խորք հուզեցին Հավատացյալների ընդհանուր հորը:

Հովանավորելու Համար դժբախտ Հայերին, որոնց լիակատար բնաջնջում է սպառնում, Նորին սրբազանությունը միջնորդել է Օսմանյան կայսեր առջև՝ լինի դա ուղղակի ձևով՝ առձեռն 2 նամակների, կամ Կոնստանդնուպոլսի պետական պատգամավորի միջնորդությամբ:

Ավելին՝ Վիեննայի և Մյունխենի պապական դեսպանության միջոցով Նորին սրբազանությունը այս առիթով Նորին պապական դերազանցության պետության և Գերմանիայի կայսերական կառավարության օգնությունը խնդրեց և հաշիվ պահանջեց, թե նրանք ինչ միջոցներ են ձեռք առել մինչ այժմ դժբախտներին օգնելու նպատակով: Բացի դրանից, նա, իր իշխանության սահմաններում, աշխատում է թեթևացնել Սիրիայի և Լիբանանի սովամահ եղող քրիստոնյաների տառապանքները, հետաքրքրվում նրանց սննդամթերքով ապահովելու հարցով:

Նկատի ունենալով վերոհիշյալ զեկուցագրում վերը նշված իրադարձությունների ցավալի փաստերը, Նորին սրբազանությունը իմ միջնորդի միջոցով կրկին դիմում է ձեր կառավարությանը, խնդրելով նրան անձամբ ծանոթանալ այդ զեկուցագրին և մեկ անգամ ևս այդ անբախտներին փրկելու փորձ անել: Նորին սրբազանությունը չի քողարկում հարցի մեծադուլն դժվարությունը՝ հաշիվ առնելով այն պայմանները, որոնցում դտնվում է Օսմանյան կայսրությունը, նա դիտի նաև այն արգելքների մասին, որոնք կհառնեն մեր առջև՝ այդ դժբախտ շրջանները սննդամթերքով ապահովելու փորձի դեպքում:

Այնուամենայնիվ Սուրբ Հայրը հույս ունի Ձերդ գերազանցութ-
յան և ձեր ժողովրդի կրոնական և մարդասիրական խոր զգացումների
վրա, որոնք չեն ցանկանա իրենց մասնակցությունը չբերել նման գթա-
սիրտ արարքի մեջ, եթե կայսերական և թագավորական կառավարու-
թյունը անհրաժեշտ համարի իր մասնակցությունը բերել այս գործին:

Հետագա ծանոթության ակնկալիքով խնդրում եմ
ընդունել հարգանքիս ամենախոր հավաստիքը
կարդինալ դե Գասպարիի՝ Վատիկանի պետական
քարտուղար

Հունգարիայի պետական արխիվ, Բուզապեշտ, OLFT – W 1110, K-157, թ. 134-135.

№ 2

Начальник штаба Итальянской военной миссии на Кавказе –
дипломатическому представителю Армении в Грузии

19 июня 1919 г.
Тифлис

Имею честь просить Вас выхлопотать от военного министра РА три
необходимых мне документа в связи с предстоящим прибытием ниже-
поименованных итальянских войск, а именно:

1. Список казарм Армении с указанием на:

а) их местонахождение, б) на сколько людей и лошадей они расчи-
таны, в) количество и состояние войск, которые их занимают в настоя-
щее время.

2. Список общественных зданий, принадлежащих правительству в
Эривани, Карсе и Нахичевани, которые могли бы служить для расквар-
тирования наших войск с теми же (а и б) указаниями в § 1.

3. Список частных домов, которые можно было бы реквизиловать
в нижепоименованных городах, в случае, если общественные здания
(по § 2) не будут достаточны для расквартирования наших солдат, при-
нимая во внимание, что мы намерены послать в Эривань 3000 чел. и
400 лошадей, в Карс – 1500 чел. и 400 лошадей, в Нахичевань – 500
чел. и 75 лошадей.

4. Извлечение из военного закона пункта, определяющего органи-
зацию армии РА, а также и настоящее устройство современной армии.

5. Распределение частей армии по территории Армении.

Примите уверения в моем нижайшем почтении.

Подполковник, начальник штаба
Итальянской военной миссии на Кавказе
Мишели

ЦГИА РА, ф. 276, оп. 1, д. 174, л. 4.

№ 3

Представитель Ватикана в Закавказье Дельпуш – министру
иностранных дел Армении

21 октября 1919 г.

Вы знаете об интересе, который его святейшество папа проявляет к армянской нации. Он горячо желает, чтобы благородный народ, перенесший самые тяжкие испытания на Земле, наконец был бы счастлив, обрел мирную и свободную родину, в лоне которой он сможет спокойно развивать свои замечательные трудовые и организаторские способности. Он был счастлив в прошлом оказать армянскому народу моральную поддержку и первым поднять голос в его защиту. Он всегда будет готов поддерживать с армянским правительством самые дружеские отношения.

Եկեղեցական արտակարգ գործերի համար,

սրբազան կոնգրեգացիայի արխիվ, Վատիկան. AA EESS. Watikan, 126, p. 3643.

№ 4

ՀՀ կառավարության նախագահ Ա. Խատիսյանը՝ Թիֆլիսում Հռոմի պապի առաքելական փոխանորդ Հայր Դելֆուշին

13 նոյեմբերի 1919 թ.

Մեծապատիվ Հայր

Պատիվ ունեմ Ձեզ հայտնելու, որ ստացել եմ Ձեր օգոստոսի 22-ի նամակը, որ վերաբերում էր Սուրբ Աթոռի առաքելական միսիային Հայաստանում:

Ինչպես Ձեզ հայտնի է, Հայաստանում խզճի ազատությունն է տրված և բոլոր գավանանքները բացարձակապես ազատ են: Հանրապետության կառավարությունը պարտք է համարում՝ ամեն տեսակ հնարավորություններ ստեղծել կաթոլիկ կրոնական իշխանություններին՝ իրենց առաքելական միսիան կատարելու համար:

Հայկական կառավարությունը իր օժանդակությունն է խոստանում կաթոլիկ եկեղեցուն:

Առիթից օգտվելով խնդրում եմ, գերապատիվ տեր Հայր, սրբազան պապին արտահայտել մեր խորին երախտագիտությունը և մեր անսահման հարգանքը նրա բարձր միջնորդության համար ի նպաստ Հայերի:

Խնդրում եմ նույնպես, որ նա իր հեղինակավոր և արդարացի ձայնը բարձրացնի մեր գործի վճռական պահին:

ՀՀ կառավարության նախագահ մինիստր
մինիստրության գլխավոր քարտուղար

Ա. Խատիսյան

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 201, թ. 104:

№ 5

Թիֆլիսում Հռոմի պապի առաքելական փոխանորդ Ս. Դեյֆուլը՝ ՀՀ կառավարության նախագահ Ա. Խատիսյանին

27 նոյեմբերի 1919թ.

Թիֆլիս

Պ. Նախագահ,

Թիֆլիսից հեռանալուց առաջ, պարտք եմ համարում արտահայտել իմ խորին երախտագիտությունը Ձեր այնքան բարյացակամ, այնքան սիրալիր ընդունելության համար, որ ցուցաբերեցիք նաև ՀՀ ամբողջ տեղիտորիայում:

Ամբողջ սրտով շնորհակալություն եմ հայտնում Ձեր գերազանցության այնքան գողտրիկ նամակի համար: Սրբազան պապը խորապես կհուզվի այն ազնիվ զգացումների համար, որ Դուք արտահայտել եք նրա անձնավորության նկատմամբ և այն ազատության համար, որ Դուք տվել եք նրա առաքելական միսիային:

Վստահ եղեք, պարոն նախագահ, որ Սրբազան պապը ձեր երկրի և ձեր ազնիվ ժողովրդի նկատմամբ լավագույն զգացումներ է տածում: Նա համակված է ամենամեծ և ամենաանձնվեր բարեկամությամբ հայ ժողովրդի նկատմամբ: Նա միշտ ջանալու է իր միջոցների չափով իրականացնելու հայ ժողովրդի օրինական և ազնիվ ձգտումները: Նա դիտե, որ հայ ազգը իր հերոսական անցյալով, իր տրադիցիաների պահպանման ուղղությամբ, իր հատկությունների շնորհիվ, արժանի է տեղ գրավել ազատ ժողովուրդների կողքին: Ես հուզված եմ Հայաստանում տեսնելով այն տանջանքները, որ հայերը հերոսաբար կրում են:

Ընդունեցեք - Առաքելական փոխանորդ Ս. Դեյֆուլ:

Արևելյան եկեղեցու համար

Սրբազան կոնգրեգացիայի արխիվ,

Վենետիկ. Հայեր և Կովկաս.

CO, 106, p. 3228.

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 201, թ. 108:

№ 6

Представитель Итальянской военной миссии в Эривани Н. дель-
Альбицци – председателю правительства Армении А. Хатисяну

22 декабря 1919 г.

Эривань

Господин председатель!

Полковник Габба находит, что по многочисленным вопросам товарообменные коммерческие дела, ведомые маленькими фирмами, ни к чему серьезному не ведут и, поэтому считает, что гораздо выгоднее учредить большое коммерческое общество, берущее на себя торговые сношения между Италией, Арменией и Персией, вначале хотя бы через Закавказье.

Это общество должно было бы быть сформировано капиталами: итальянскими, армянскими, предпочтительно находящимися в Италии, и в небольшом количестве – персидскими.

Главная контора должна быть в Италии, второстепенные – в Батуме, Тифлисе, Александрополе, Карсе, Эривани, Тавризе и прочих городах по назначению и требованию.

При каждой конторе должен будет находиться итальянский агент, а состав служащих – из местного населения и, для облегчения сношений и торговли – некоторые евреи и мусульмане.

1. Главной целью общества будет экспортация и импортация товаров Италии, Армении, Персии и Закавказья, а также устройство торговых ветвей и т.п.
2. Перевозка и страховка товаров четырех наций для себя и для других государств. Войти в сношение с навигационными обществами, имеющими станцию в Батуме, также и с железными дорогами.
3. Организация общественных банков для облегчения затруднений товарообмена и т. п.

Этого было бы достаточно для хорошего начала и процветания этого общества.

Поэтому полковник Габба просил меня передать Вам этот проект, желая иметь Ваше мнение насчет этой организации. Об этом он писал уже итальянскому министру торговли и промышленности и имеет в виду поехать в Италию, чтобы обсудить и лично организовать вышеупомянутое общество.

Если Ваше превосходительство имеет желание лично переговорить с полковником Габба по этому поводу до его отъезда в Италию,

то я могу предупредить его и, вообще, прошу располагать, когда и как желаете.

С глубоким почтением

Представитель Итальянской военной миссии,
лейтенант, маркиз *Н. делла-Альбицци*

ЦГИА РА, ф. 202, оп. 1, д. 58, л. 156.

№ 7

Председатель Совета торгово-промышленной палаты Армении —
представителю Итальянской военной миссии в Армении *Н. делла-
Альбицци*

28 февраля 1920 г.

Эривань

Милостивый государь!

С 8 февраля с.г. в г. Эривани начала функционировать Торгово-промышленная палата Армении, имеющая целью способствовать развитию торговли и промышленности в стране, улучшению условий производства и труда в ней, а также экономическому сближению Армении с граничными странами путем установления постоянной связи с торгово-промышленными палатами и их центрами. Ввиду этого, Совет палаты, считая необходимым и целесообразным установить таковую связь в первую очередь с Италией, обращается настоящим письмом к Вам с покорнейшей просьбой не отказать в любезности: содействовать установлению отношений между вновь учрежденной Торгово-промышленной палатой Армении и таковыми же палатами Италии, путем обмена обоюдно полезными советами и, поделиться с нами теми данными, которыми Вы располагаете в настоящее время.

Председатель Совета торгово-промышленной
палаты Армении

ЦГИА РА, ф. 209, оп. 1, д. 3, л. 20.

№ 8

Министр финансов Армении – министру иностранных дел Армении

10 марта 1920 г.
Эривань

Препровождая при сем письмо Итальянской миссии от 7 марта этого года и проект договора между правительством Армении и Итальянской компанией:

1. Сообщаю, что сегодня в 5-6 часов вечера в Александрополь выезжает уполномоченный министерством путей сообщения инженер Тер-Микаелян, которому я поручил немедленно, по приезде в Александрополь, составить подробный список всех необходимых для Армении товаров и передать его представителю компании инженеру Пицорно.

2. Ввиду требования Итальянской миссии подписания договора в Тифлисе, прошу письмом уполномочить нашего дипломатического представителя Евангуляна и инженера Хатисяна провести совместно с г. Пицорно расценку товаров по списку инженера Тер-Микаеляна и подписать договор, причем при определении количества требуемых с нас компанией хлопка и меди в обмен на товары, которые ею должны быть доставлены в Армению, они, уполномоченные нами, должны руководствоваться следующими ценами: франко-Эривань кило хлопка 12-15 итал. лир и кило меди 17-20 лир.

3. Прошу также поставить в известность наших уполномоченных, что в случае необходимости сможем за часть ввозимых в Армению товаров заплатить иностранной валютой.

Прошу письмо на имя Евангуляна и Хатисяна сегодня же послать инженеру Тер-Микаеляну для пересылки его по принадлежности.

Министр финансов Республики Армении

ЦГИА РА, ф. 202, оп. 1, д. 34 (1), л. 12.

№ 9

Գնդապետ Գազարան՝ ՀՀ կառավարության նախագահ Ա. Նատիսյանին

13 մարտի 1920թ.

Նորին Գերագահություն պ. Նատիսյանին
Հայաստանի կառավարության նախագահին

Պատիվ ունեմ հաղորդելու, որ Իսախանյի թագավորության կառավարությունը ինձ նշանակել է քաղաքացիական գործակալ Հայաստանում: Կոն-

տիի միսիայի մեկնումից հետո (միսիան մեկնում է մասի 15-ին) պատիվ պիտի ունենամ գալ Երևան Ձեզ ներկայացնելու իմ հավատարմագրերս:

Հազորդակցութեան կենտրոնացման պատճառով իմ պաշտոնատեղիս հաստատված կլինի Թիֆլիս և մարկիզ գելլա Ալբիցցին շարունակելու է իմ ներկայացուցիչը լինել Երևանում: Լուծման այս կետը վերջնական չէ և ընավ չի նախորոշել այն որոշումները, որ իտալական կառավարութիւնը կարող է անել Անգրկովկասյան երեք հանրապետութիւնները *de jure* ճանաչել: Իտալական գորական միսիան մասի 10-ից կդադարի դոյութիւն ունենալուց և կփոխարինվի Հայաստանում Իտալիայի թագավորական քաղաքական գործակալութիւնով (*Regia agenza politica Italiana in Armenia*):

Ընդունեցեք պարոն Մինիստր իմ ամենախոնարհ հարգանաց արտահայտութիւնը:

Գնդապետ Գաբրիա

Ստացված իսկականը ստորագրել է մարկիզ Ալբիցցին

ՀՀ ԿԳՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 8:

№ 10

Председатель правительства Армении А. Хатисян – руководителю Итальянской военной миссии, королевскому политическому агенту при правительстве Армении полковнику Габба

30 марта 1920 г.

Ваше превосходительство!

Телеграфная станция в Эривани без линии начала функционировать; в настоящее время она имеет регулярную связь с английской станцией в Багдаде. Было бы желательно, чтобы она вступила в связь с итальянскими станциями, например, с Римом или Константинополем, даже с посредническими станциями из Багдада или Бесерата, если прямая связь не будет возможна.

Я буду Вам очень благодарен, господин полковник, если Вы сделаете все необходимое, чтобы телеграфные станции без итальянской станции передавали нашей станции в Эривань информацию и получали бы сообщения из Эривани.

Пользуясь случаем, прошу вас, Ваше превосходительство, принять уверения в моем большом уважении.

А. Хатисян

ЦГИА РА, ф. 202, оп. 1, д. 58, л. 15.

№ 11

Телеграмма полковника Габба – А. Хатисяну

26 апреля 1920 г.
Тифлис

Ответ на № 2529 от 25 апреля. Официальные сообщения, полученные по радио из Сан-Ремо, очень короткие. На заседании 20-го обсуждались армянский вопрос и проблема Батума. На заседании 21-го решили создание нового армянского государства. На заседании 23-го утром было рассмотрено настоящее положение Кавказа и заслушали Погос Нубара. На заседании 23-го после полудня возобновили обсуждение армянских границ и приступили к вопросу оказания помощи новому армянскому государству для облегчения его устройства. На заседании 24-го Совет продолжал обсуждение территориальных статей мирного договора с Турцией относительно Армении. Совет окончит свои работы 29-го. Следующее собрание в Париже.

Полковник *Габба*

ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 556, ч. 2, л. 167.

№ 12

Радиотелеграмма М. Варандяна – Министерству иностранных дел
Армении4 мая 1920 г.
Тифлис

26 числа долго обсуждался наш вопрос в Сан-Ремо. Трапизон остался туркам, имеем выход к морю через Лазистан. Большие трудности возникли с Эрзрумом. Военные эксперты считают возможным включить этот город в армянское государство. Но вопрос еще не разрешен. После долгих обсуждений конференция решила посоветоваться с президентом Вильсоном. Ответ ожидается к 10 мая, когда турецкая делегация будет вызвана в Париж.

Варандян

ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 566, л. 220.

№ 13

Իտալական կառավարության մինիստր նախագահ Նիտտիից՝ ՀՀ վարչապետ պ. Խատիսյանին

5 մայիսի 1920թ.

Երևան

Շնորհակալություն եմ հայտնում Ձերդ գերագանցությունը մարտի 16-ի դրության համար: Ես երջանիկ եմ Ձեզ հավաստիացնելու, որ Իտալիայի թագավորության կառավարությունը շատ մեծ ցանկություն ունի ավելի սերտ դարձնել այն բարեկամական կապը, որ միացնում է հայ և իտալական ժողովուրդները: Իտալիայի ապագա ներկայացուցիչը Երևանում իր ամբողջ գործունեությունը այդ նպատակին կնվիրի ու կջանազարկ տալ երկու երկրների քաղաքական և առևտրական հարաբերություններին: Այդ նպատակով ես վստահ եմ այն կառավարության վրա, որը Դուք գլխավորում եք:

Իտալական կառավարության
մինիստր նախագահ Նիտտի

Թարգմանությունը ուղիղ է
թարգման. Ա. Պաշլավունի

ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 23, 27:

№ 14

Выписка из газеты "Борьба"

9 октября 1920 г.

"Представители Франции и Италии в Армении"

Французский консул и заместитель Верховного комиссара Франции в Закавказье г. Неттеман, в беседе с сотрудником Грутте о положении Армении заявил: Я убежден в несомненной победе Армении над турецкими националистами. Армянская армия достойна всяческой похвалы в смысле изумительной дисциплины и военной доблести. Армения может надеяться на активную помощь союзников, войска которых очень интенсивно наступают на кемалистов с турецкой стороны. В настоящее время создалась такая обстановка, при которой союзники не могут перебросить свои силы в Армению для оказания непосредственной военной поддержки армянским силам. Силы союзников гораздо более полезны на том фронте, тем более, что там в гораздо более

удовлетворительном состоянии находятся пути сообщения и дело снабжения войск. Я определенно могу заявить, что союзные военные силы под командованием генерала Гуро с большой готовностью и бодростью поддерживают Армянскую республику и надеются спасти ее. Армения достойна независимого политического и экономического существования.

И. д. Королевского политического агентства Италии в Закавказье г. Франзони также выражает уверенность, что союзники сумеют заставить турецких националистов считаться с постановлением мирной конференции. Армения пользуется у союзников несомненной симпатией и союзники примут все меры, чтобы обеспечить Армению в политическом и экономическом отношениях. Державы Согласия найдут средства для того, чтобы заставить кемалистов уважать независимость Армении.

ЦГИА РА, ф. 200, оп. 1, д. 602, л. 16.

№ 15

Ա. Ահարոնյանը՝ վարչապետ Հ. Օհանյանին

10 հոկտեմբերի 1920թ.

Փարիզ

Սիրելի Համո. Գրաբերս՝ պրն. Գորրինի, գալիս է Երևան որպես Իտալիայի դիվանագիտական ներկայացուցիչ: Պրն. Գորրինին մեր շատ անկեղծ բարեկամն է. դա նա ապացուցեց դեռ 1915 թ. Տրապիզոնում իտալական հյուպատոս եղած ժամանակ:

Նա առաջիններեն էր, որ ձայն բարձրացրեց և Եվրոպային ծանուցեց հայկական սկսվող սարսափները: Այնուհետե էլ պրն. Գորրինին չի դադարել ամեն կերպ մեզ աջակցելուց:

Իտալական կառավարությունն ավելի լավ օգնություն անել չէր կարող: Ես Հոռոմ եղած ժամանակ այս մասին իմ ջերմ գոհունակությունը հայտնեցի իտալական արտաքին գործոց նախարար կոմս Աֆորցային, որ ինձ առանձին հաճույք պատճառելու համար հայաարարեց այդ լուրը առաջին անգամ:

Ես հավաստացած եմ, որ պրն. Գորրինին պիտի կարողանա շատ լավ հարարերություններ հաստատել մեր և իր կառավարության մեջ և վստահ եմ, որ դուք էլ կանեք ըստ ինչ կախված է Ձեզանից, հեշտացնելու, նույնիսկ հաճելի դարձնելու այս հայասերի գործը:

Ա. Ահարոնյան

ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 59:

№ 16

Իտալիայի դիվանագիտական գործակալի ներկայացուցիչ Ն. դելլա Ալբիցցին՝ Հայաստանում ՀՀ արտաքին գործերի նախարարին

6 նոյեմբերի 1920 թ.

№ 70 ա

Երևան

Նորին գերազանցություն
Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարար

Պատիվ ունեմ ուղարկելու Ձեզ, սրան կից, «Սագո» անանուն ընկերության ալյուրովա թվակիր նամակը:

Որպես Հայաստանում Իտալիայի դիվանագիտական գործակալի ներկայացուցիչ, խնդրում եմ Հայտնասլես Ձերդ գերազանցությունից, որ Իտալական «Սագո» Տան շահերը, որ այնքան գործած է Հայաստանի համար, սլաշտպանվեն ամենակատարյալ ձևով:

Ներկայով Ձերդ գերազանցության առջև արածս քայլը իմացնելու եմ իմ կառավարության:

Վստահ թե իմ խնդիրքը նկատի կառնվի, ընդունեցեք Ձերդ գերազանցություն, իմ կատարյալ հարգանքներիս հավաստիքը:

Իտալիայի թագավորական դիվանագիտական
գործակալի ներկայացուցիչ Հայաստանում
Մարկիզ Ն. դելլա Ալբիցցի

Փոխադրեց Ֆրանսերենից
Թարգման. Յ. Մարուխյան

ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 566, թ. 61:

№ 17

Удостоверение на имя Лучиано Каффи, итальянского
коммерческого представителя в Армении

18 января 1921 г.

Сим удостоверяю, что Лучиано Каффи, итальянский гражданин, является временным коммерческим делегатом Италии в Армении, и ему поручается ехать в Эривань, чтобы урегулировать с Армянским правительством вопрос о складах, вагонах и товарах общества "САГО".

Кроме того, Каффи поручается вести переговоры с Армянским правительством относительно разных других вопросов в интересах торговых сношений между Армянским правительством и Италией и сообщить результаты его миссии нижеподписавшему.

По сему прошу союзные и дружественные власти, в особенности, власти Армянской Республики, оказать г-ну Каффи благожелательный прием и содействие.

Итальянский королевский политический
посланник Италии в Армении *Дж. Горрини*

ЦГИА РА, ф. 113, оп. 3, д. 40, л. 19.

№ 18

Представитель Италии в Армении Дж. Горрини – в Ревком Армении

1 мая 1921г. за № 206

Из бесед, которые имели место в Тифлисе и в эти последние дни в Эривани, я вынес впечатление, что мои начинания в области создания и развития промышленности в Армении при помощи итальянской техники и итальянского капитала, встретили ваш интерес и одобрение.

При сем прилагаю список тех промышленных, которые, по моим наблюдениям, наиболее подходят для наших целей. Возможно, однако, что в случае благоприятных результатов намеченного дела и по приезде в Армению итальянских инженеров и техников создание других, здесь не упомянутых отраслей промышленности окажется желательным и необходимым для полной и более продуктивной организации.

При предоставлении концессий должны будут быть определены их границы и даны итальянской группе концессионеров права исключительной эксплуатации этих определенных участков, не только потому, что это касается добычи той руды или того продукта, для извлечения которых участки были отведены, но и права предпочтения на другие отрасли промышленности, в случае возникновения вопроса о предоставлении нового рода концессий на тех же участках каким-либо иностранным или местным организациям.

Кроме того, для нужд создаваемых промышленных, необходимо предоставление правительством Армении леса и других строительных материалов, добываемых в пределах ССРА.

Срок концессий от 36 до 40 лет.

На отдельных приложенных листках помещены некоторые детали относительно вышеупомянутых концессий. Ясно, однако, что без

участия технического персонала, компетентного в каждой из проектируемых промышленностей, трудно придти к окончательным, конкретным результатам.

Поэтому, в настоящую минуту необходимо срочно выработать соглашение в главных чертах, при помощи обмена нотами между Ревкомом и мною.

В то же время Ревкомом должна быть составлена комиссия или делегация с полномочиями подписать в Италии, после обсуждения всех интересующих вопросов, контракты в их окончательной форме, причем подпись этой комиссии или делегации должна всецело обязывать Ревком.

Очень важно также снабдить меня возможно большим количеством документов и образцов /о коих говорится в приложенных листах/.

Наконец, желательно было бы узнать новый горный устав ССРА для того, чтобы точно определить настоящее значение как прав бывших при царском режиме собственников, концессионеров и арендаторов рудников и рудоносных месторождений, так и тех спекулятивных сделок по покупке и продаже рудников, которые были совершены в Закавказье /особенно в Тифлисе/ и за границей после русской революции.

Итак резюмируя:

1. Вручение мне письменного подтверждения Ревкома о его соглашении в главных чертах и на вышеприведенных началах предоставить итальянскому капиталу концессий, о которых идет речь.
2. Назначение комиссии или делегатов с полномочиями, которые должны со мной выехать в Италию.
3. Вручение мне научных материалов, проектов и образцов, относящихся к проектируемым промышленностям.
4. Определение юридических прав бывших собственников, концессионеров и арендаторов рудников.

Считаю нужным здесь напомнить, что выполнение четырех вышеприведенных пунктов должно быть закончено в срок не более, чем в 7 дней, дабы я мог срочно выехать и прибыть в Италию раньше начала летнего сезона, чтобы застать в Риме наиболее влиятельных лиц как политического, так и промышленного и торгового мира Италии.

В случае достижения окончательного соглашения и получения концессий, о которых выше шла речь, со стороны Италии будут сделаны следующие предложения:

1. Организация в Армении итальянской амбулатории, которая возьмет на себя задачу оздоровления края от малярии и др. болезней.
2. Итало-армянское культурное сближение: Италия предоставит возможность известному количеству армянских студентов

поступать ежегодно на льготных условиях в итальянские университеты и институты.

3. Содействие по покупке и привозу продовольственных продуктов в Армению.

В ожидании Вашего ответа прошу Вас принять уверение в моем совершенном к Вам почтении.

Представитель Италии в Армении
Дж. Горрини

ЦГИА РА, ф. 113, оп. 3, д. 40, л. 15-16.

№ 19

Представитель Италии в Армении Г. Горрини – наркому иностранных дел ССР Армении А. Мравяну

11 мая 1921г.

Уезжая, оставляю в качестве управляющего делами дипломатического и коммерческого представительства Италии в Армении г. Лучиано Каффи.

Г. Каффи имеет право пользоваться шифром и сноситься непосредственно с министерством иностранных дел в Риме при помощи радио. Для этой связи остается в Эривани специалист по радиотелеграфии г. Акиллэ Бруна.

Мой отъезд имеет главным образом цель ускорить организацию крупного итальянского синдиката для концессий в Армении, по поводу которых между нами ведутся переговоры. И я надеюсь возвратиться через два-три месяца с положительными результатами.

Пользуюсь случаем, чтобы выразить Вам еще раз чувство моей глубокой признательности за оказанные мне гостеприимство и содействие в моей миссии и в надежде, что мое краткое пребывание в Армении послужит развитию и укреплению дружественных уз между армянским и итальянским народами, прошу Вас принять уверение в моем совершенном к Вам почтении.

Представитель Италии в Армении
Дж. Горрини

ЦГИА РА, ф. 113, оп. 3, д. 40, л. 12.

Տեսակցութիւնն Իտալիո նախարարապետ Մուսոլինիի Հետ

30 նոյեմբերի 1922 թ.

Հոռմ

Դեսպանատան կողմեն պ. Մուսոլինիին դրկած էինք արդեն թե՛ շնորհավորական ուղերձ և թե՛ հակիրճ հիշատակադիր Հայաստանի մասին:

Երեք օր առաջ, Արտաքին Գործոց նախարարի դիվանապետ րարոնեստ Ռուսսոն ընդունելով դեսպանատան քարտուղար պ. Սարյանը, ասաց նրան, թե պ. Մուսոլինիին արդեն փոքր ինչ տեղյակ խնդրին, կր հրավիրե պ. Վարանդյանը տեսակցելու իրեն հետ նոյեմբերի 29-ին:

Երեկ ներկայացա նախարարապետին և երկարորեն զեկուցեցի մեր խնդրի մասին, վեր հանելով հայոց դերը պատերազմի ընթացքին, Դաշնակիցներուն խոստումները, մեր կրած հուսահատութիւնները և այլն. նկարագրեցի ներկա վիճակը, Հայաստանը երկու լուծերի տակ, հիշեցի Ազդերու Դաշնակցութեան և Դաշնակից կոնֆերանսներու միահամուռ որոշումները և այլն: Ասացի ի միջի այլոց հետևյալը:

Հակառակ թուրքո-րուլեիկյան դրավումին, Դաշնակիցները յուրաքանչյուր մի կոնֆերանսի մեջ պնդեցին անկախ Հայաստանի սկզբունքի վրա - անկախ Հայաստան թեկուզ սահմանափակ տերիտորիայի վրա, նրանք ձեակերպեցին այդ Հայոց Ազդային օջախ ըստերով - «Ազդային օջախ», որ պետք է ստեղծվի թուրքերու դրաված Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի վիլայեթներում, ունենալով մի ելք դեպի Ան ծովը:

Նախարարը խորասուզված բազկաթուռի մեջ, աչքերը ինձի հառած, լսում էր խորին ուշադրութեամբ: Այդ վայրկյաններին ներս մտավ դիվանապետը և դիմեց ինձ, ասելով. պարոն մի նիստը, ներեցեք, որ կրնդ հաստեմ ձեզ, բայց այնտեղ նախասրահում սպասում են բաղամաթիվ այցելուներ ստիպողական խնդիրներով, ես Ձեզ շատ կխնդրեմ կարելվոյն հակիրճ լինել ...

Ես. Արդեն վերջացնելու վրա եմ, երկու վայրկյան միայն խոսելիք ունեմ ...

պ. Մուսոլինիին նշան արավ, որ շարունակեմ. դիվանապետը դուրս դնաց: Ես, քաջալերված նախարարապետի ուշադրութիւններ, որոշեցի քիչ ավելի երկարել իմ զեկույցը:

Այդ «Ազդային օջախը» պետք է ապաստան տա մոտ մեկ միլիոն թուրքահայերի, որոնք մեծ կոտորածների ահեն փախած են ու ժամանակավոր բնակութիւն հաստատած օտար երկրներում:

«Ազդային օջախը» անհրաժեշտութիւնը ստեղծվեց դեռ Փարիզի վերջին միջազնակցային կոնֆերանսի մեջ, ու պետք է ըսեմ, ի պատիվ Իտալիայի, որ մեր դատի պաշտպանութեան ինիցիատիվը այդ կոնֆերանսին, հանձն առավ Իտալիո Արտաքին Գործոց նախարարը:

Վերջապես, անկախ Հայոց օջախի դադափարը միաձայն քվեարկված է Ազդերու Լիգայի կողմեն, բոլոր համադուժար ժողովներու մեջ:

Պարոն նախագահ, Իտալիան իբրև ամենեն անշահախնդիր պետութ-
յունը Արևելքում, կարող է մի վսեմ ու ազնիվ դեր խաղալ մեր խնդրի
մեջ: Նա կարող է գրգել, հորդորել մյուս դաշնակիցներին և, նույնիսկ
թուրքերին, իրագործելու, վերջապես, գեթ մեր Ազգային անկախ օջախը
... Իտալիան ոչ միայն կվարվեր համաձայն իր Risorgimenton-ի փառա-
հեղ պանդուխտներին, այլև համաձայն իր կենսական շահերին: Դուք
արգեն ձեռնարկած եք խաղաղ թափանցումի քաղաքականություն
Արևելքում: Այդ մեծ ձեռնարկի մեջ դուք կարող եք հենվել միմիայն Հայ
տարրի վրա, որովհետև անգամ ներկա արտասովելի վիճակում դարձյալ
Հայ տարրն է, որ լինելով հանդերձ վարպետ երկրագործ, ընդունակ է մեծ
առևտուր մղելու և կմղե իսկ Արևելյան երկրներում, Կովկաս, Պարսկաս-
տան, Թուրքիո մեկ մասում, մինչև իսկ հեռավոր Թուրքեստանում: Ես
պետք չունեմ խոսելու այն հինավուրց կուլտուրական կապերի մասին, որ
կան Հայերի ու իտալացիների մեջ: Ամեն տարի թե՛ Վենետիկի Հայկական
վարժարանեն և թե՛ Իտալիո համալսարաններեն ուսումնավարտ Հայ երի-
տասարդներ կերթան գեպի Արևելք, օժտված ձեր լեզվի, դրականությամբ,
պատմության ծանոթություններով ... որ Հայ մտավորականությունը
հարկավ պետք է օժանդակ աղագակ լինի Ձեր Հայրենիքի քաղաքական ծա-
վալումին ...

Իտալիան պետք ունի հում նյութերի: Հայաստանն ունի կուսական
վիճակում մեծ հարստություններ. այդ մասին ես Ձեզ կներկայացնեմ հա-
տուկ հուշագիր: Հայաստանը լայն բաց կանե իր դռները իտալական կա-
պիտալի ու ձեռնարկների համար, թե՛ աշխարհագրապես և թե՛ ուրիշ տե-
սակետներով Իտալիան ամենեն մոտիկն է մեր երկրին: ... Եվ քանի որ ա-
զատագրված Հայկական օջախը, քիչ թե շատ խոշոր մի հողամաս, պիտի
ունենա մի հոգատար պետություն, մենք միանգամայն բախտավոր կլի-
նենք, եթե Իտալիան լինի այդ հոգատարը ...

Ուզում էի անցնել Լոդանի կոնֆերանսին, երբ Մուսուլինին սկսեց
հարցեր տեղալ.

Մուսուլինի. Ասացեք խնդրեմ, ուրեմն դուք ելք ունենալ կուզեք Սև
ծովի վրա... Ձեր նավահանգիստը ...

Ես. Նախագահ Վիլսոնը, որ ինչպես գիտեք գծել էր մեր սահմանները
իբրև իրավարար, մտցրել էր Տրապիզոնը Հայաստանի մեջ, բայց քանի որ
թուրքերը դժվարություններ ալքան խոշոր մի քաղաք ու նավահանգիստ
կտան մեզ, մենք պատրաստ ենք գոհանալու, օրինակ Րիզեով կամ նույ-
նիսկ Աթինայով:

Մուսուլինի. Րիզեն... այդ որտեղ է:

Ես փոքի Հայաստանի քարտեղը:

Մուսուլինի. Քարտեզ ունեք, շատ լավ, կխնդրեմ ինձ թողնեք այս օ-
րինակը: Վեր կացավ բազկաթոռից ու սկսեց դիտել ծովն ու եզերքը:

Ես. Ահա Րիզեն և Աթինան:

Մուսուլինի. Այժմ ցույց տվեք, խնդրեմ, Հայաստանը. ահա տեսնում
եմ Վանա լիճը, սա Հայաստանն է, ահա և էրզրումը. սա՛ է ձեր մայրա-
քաղաքը:

Ես. Դա մեր հին մայրաքաղաքն է, այժմյանը ահա Երևանն է:

Մուսուլիների. Բայց ի՞նչ եք անելու բոլշևիկյան Հայաստանը...

Ես. Պետութունների առջև դրված է թուրքական Հայաստանի խնդիրը, մենք միմիայն նրանով ենք զբաղված, հուսալով, որ ժամանակին կիրականանա միացյալ Հայաստանի մեր իդեալը:

Մուսուլիների. Որքա՞ն հայութունն կա բոլշևիկյան ձեր հանրապետության մեջ:

Ես. Մոտ մեկ միլիոն:

Մուսուլիների. Որքա՞ն է հայերի ընդհանուր թիվը:

Ես. Մոտ երեք միլիոն... Ավելի էինք, բայց վերջին քառորդ դարում մեջ կորցրել ենք մոտ մեկուկես միլիոն – մեկ միլիոնի չափ թուրքերը կոտորեցին պատերազմի ընթացքում...

Մուսուլիների. Որտե՞ղ են մյուս երկու միլիոնը:

Ես. Երկու միլիոնի չափ Կովկասի սահմաններում, Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Հարավային Ռուսիա և այլն:

Մուսուլիների. Իսկ երրորդ միլիոնը:

Ես. Երրորդ միլիոնը ցիր ու ցան Սիրիայում, Բալկաններում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Կոստանդնուպոլիս, Եվրոպա, Ամերիկա և այլն:

Մուսուլիների. Ինչպե՞ս են ապրում, օրինակ, Կովկասի մեջ գտնվող փախստականները:

Ես. Հայրենի հողեն կտրվածները սովորաբար առուտուրով կզբաղվեն: Ինչպես Ձեզ ըսի, մերոնք ուժեղ են այդ ճյուղի մեջ, թեև բուն ժողովուրդը հողադուրժ է:

Մուսուլիների (արհամարհոտ շեշտով). Թուրքը – ոչ...

Ես. Թուրքը առեարի մեջ դեռ կգտնվի մանր խանութպանության մակարդակի վրա:

Մուսուլիների. Իսկ հրեաներ կա՞ն Հայաստանում:

Ես. Հրեաներ մեզ մոտ չկան, Գովկասում կան քիչ թվով:

Մուսուլիների. Ինչսլես է ձեր և հրեաների հարաբերությունները:

Ես. Հրեաների մեջ մեկ տարր կա, որ շատ համակիր է մեզ, մյուսը կա, որ երբեմն թշնամական տրամադրություն ցույց տված է մեր մեծ աղետների օրերում, օրինակ Կոնստանդնուպոլսում:

Մուսուլիների. Այո, այո, ոչ միայն Պոլսում, այլև Զմյուռնիայում... Այդ ինչպես եղավ, որ հրեական թաղը ազատ մնաց հրդեհից...

Ես. Առհասարակ, ճիշտ է, թուրքերը հրեաներին չեն հալածել:

Մուսուլիների նորից սկսեց դիտել քարտեզը:

Ես. Ձերդ Գերազանցություն, Վիլսոնի գծած Հայաստանը ըստական ընդարձակ է, ինչպես տեսնում եք:

Մուսուլիների (մտածկոտ): Եվ Դուք այդ աստիճան սահմանափակել եք այժմ ձեր պահանջները...

Ես. Ինչ անենք, կուզենք համեստ լինել, որպեսզի շանս ունենանք ստանալու:

Մուսուլիների. Բայց ինչպես կարող է ապրել այս երկիրը, եթե անգամ ծովելք ունենա...

Ես. Ֆինանսական միջոցների համար մենք մեծ հույս ունենք Ամերիկայի վրա, ուր մեր դատը շատ համակրանք է վայելում: Եվ արդեն երեք տարի առաջ ամերիկացիք պատրաստ էին հատկացնել 20 միլիոն դոլլար Հայաստանի վերաշինության դործին...

Մեր զրույցը դեռ, ըստ երևույթին, երկար պիտի շարունակվեր և ես դեռ ասելիք ունեի, մասնավորապես Լոզանի կոնֆերանսի շուրջը: Տարաբախտաբար, այդ վայրկյանին նորեն ներս մտավ դիվանագետը և հուսահատ շեշտով նորեն հիշեցրեց մյուս այցելուների մասին (ես տեսել էի, որ, իրոք, բազմաթիվ էին նախասենյակում սպասողները – սենատորներ, երեսփոխաններ, ուրիշ երկրներու դեսպաններ և այլն): Սակայն ի մեծ զարմանս իմ, Մուսուլինին, ի տեղի ճամփա դնելու ինձ, ինչպես որ բնական էր այդ բազմազբաղ վիճակում, բնավ չչարժվեց տեղից և ասաց բառացի դիվանագետին. «Խնդիրը հետաքրքրում է ինձ...» Դիվանագետը, սակայն, ավելի համառ դտնվեց և ասաց. «Գիտեմ, որ խնդիրը հետաքրքրում է ձեզ, բայց հավատացեք ամենաստիպողական խնդիրներով եկած են նաև մյուս այցելուները ... sono questioni urgentissime», – կոչում էր դիվանագետը:

Այդ ժամանակ Մուսուլինին վեր բարձրացավ ու ասաց ինձ. «Մենք դեռ կարող ենք տեսնվիլ, նորեն կդաք ինձ մոտ»:

Ես. Ամենայն ուրախությամբ, պրն. նախադահ, չափազանց զրացված եմ Ձեր ուշադրության համար:

Մուսուլինի. Իսկ այս քարտեզը ինձ թողեք: Ասլա հանեց սեղանի արկղից *Osservatore Romano* (Վատիկանի սլաշտոնաթերթը) և կարդաց ինձ օրվան մի լուրը. Պապը որոշել է 400 հայ որբ աղջիկներ Հոռոմ բերել տալ և հատկացնել նրանց *Castel Candolpo*-ի շրջակա դղյականման շենքը:

Ես. Ձերդ Գերագանցություն, այդ լուրը մի այլ թերթի մեջ կարդացի խորունկ դժոճունակությամբ:

Եվ ցտեսություն ասելով, Մուսուլինին անցավ մյուս դահլիճը:

Միքայել Վարանդյան

Փաստաթուղթը պահվում է Միլանի արխիվում, պատճենը Հ. Փամբուկյանի անձնական արխիվում: